

**ԲԱՐՁՐԱՎՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՅԵՐ ՓԲԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆ**

**«ԶՈՎՈՒՆԻ» ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**



**Վերջնական հաշվետվություն**

**Հունիս, 2020թ.**

- **Նկարագիր**

Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորումը (ԷՄՀՕԼՖ), որի համար դիմել է Հայաստանի կառավարությունը, նախատեսված է էլեկտրահաղորդման գլխավորման ակտիվների հիմնանորոգման/փոխարինման միջոցով բարձրացնելու էլեկտրահաղորդման ցանցի հուսալիությունն ու կարողությունը: Այս նպատակին հասնելու նպատակով ԷՄՀՕԼՖ-ն ներառելու է Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ(ԲԷՑ) Ջովունի ենթակայանի ամբողջական հիմնանորոգումը: Ենթակայանը հանդիսանում է կարևոր հանգույց, որպես տրանսֆորմացիոն կետ 220կՎ-ից դեպի 110կՎ ցանցեր, որը մատակարարում է էլեկտրականությունը ամբողջ Երևան քաղաքով: Ենթակայանը հագեցած է երկու 220կՎ գծային բջիջներով և տաս 110կՎ գծային բջիջներով: Մոնտաժված երկու ունակային ավտոտրանսֆորմատորները յուրաքանչյուրը 125 ՄՎԱ են: Ավտոտրանսֆորմատորներ 1 և 2, որոնք շահագործման էին հանձնվել 1975 և 1979թթ.-ին համապատասխանաբար, փոխարինվեցին նորերով 2016 և 2015թթ.-ին: 220կՎ 110կՎ անջատիչները նույնպես փոխարինվեցին նորերով: Մնացած սարքավորումները ծայրահեղ հին վիճակում են, սակայն շուկայում այլևս առկա չեն փոխարինման մասեր: Ենթակայանի այս հնացած սարքավորումները վատ վիճակի պատճառով փոխարինման կարիք ունեն, որը սարքի խափանման պատճառով կհանգեցնի անցանկալի անջատման Ջովունի ենթակայանի հիմնանորոգման նախապատրաստական աշխատանքների շրջանակում պահանջվում է Շրջակա միջավայրի կառավարման պլան (ՇՄԿՊ):

- **ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ**

- Վայրը և տեղանքին կարագրությունը**

Ջովունի ենթակայանը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսային սահմանում: Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ Հայաստանի կետրոնական հատվածի արևմուտքում: Այն սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավարի մարզերին: Քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 865-1390մ բարձրության վրա:

Երևանի կլիման կիսաչոր մայրացամաքային է՝ շոգ և չոր ամառներով և ցուրտ ու ձնառատ ձմեռներով: Հուլիս ամսին միջին ջերմաստիճանը 25.8°C է, իսկ առավելագույն բացարձակ ջերմաստիճանը՝ 42°C: Հունվար ամսին միջին

ջերմաստիճանը  $-3.6^{\circ}\text{C}$  է, իսկ նվազագույն բացարձակ ջերմաստիճանը՝  $-28^{\circ}\text{C}$ : Միջին տարեկան ջերմաստիճանը  $11.9^{\circ}\text{C}$  է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 61%, տեղումների միջին տարեկան քանակը՝ 291-353մմ:

Գտնվելով կառուցապատված գոտում՝ շինարարական աշխատանքների տարածքում կենդանական աշխարհի գոյություն չունի: Ենթակայնի տարածքը ունի համարյա հարթ մակերես և հիմնականում շրջապատված է չմշակված հողատարածքներով: Միակ բացառությունը փոքր հողատարածքն է (գտնվող հաղորդալարերի տակ)՝ խնձորի, ծիրանի և թթենու ծառերով, որը հարակից է ենթակայանի հյուսիս-արևելյան ցանկապատին, հողի օգտագործումը չգրանցված է: Բոլոր մրգերը աճեցվում են հարևան համայնքի բնակչի օգնությամբ՝ անձնական օգտագործման համար: Ենթակայանի հյուսիսային ցանկապատի մոտ կա չմշակված մասնավոր հող: Ենթակայանի հարավ-արևմտյան հողատարածքը ներկայումս օգտագործվում է շինարարական թափոնների ախտահանման համար: Այնտեղ կա ավտոպահեստամասերի խանութ, խորտկարան, և հյուրանոց ենթակայանի հյուսիս-արևմուտյան մասում: Ամենամոտ բնակելի տարածքը մոտավորապես 180մ հեռավորության վրա է: Ենթակայանը գտնվում է Հրազդան գետից 140մ դեպի արևմուտք: Ենթակայանի հարավ-արևելյան ցանկապատի մոտակայքում կա մի հյուղակ:

Ենթակայանի մոտակայքով անցնող գլխավոր ճանապարհը (Եղվարդի մայրուղի) շինարարական գործունեության ընթացքում պետք է օգտագործվի հյուսիս-արևմտյան մասից տարածք մուտք գործելու համար: Ենթակայանի հարավ-արևմտյան հատվածի մոտ նույնպես կա մոտեցման ճանապարհ: Վերակառուցման աշխատանքների ժամանակ ոչ մի մասնավոր հողատարածքով չպետք է անցնի շինարարական մեքենա: Բոլոր շինարարական մեքենաները և սարքավորումները պետք է կայանվեն ցանկապատված տարածքի ներսում: Ծրագրի իրականացումը հարևան բիզնեսների վրա չպետք է ունենա ոչ ժամանակավոր, ոչ հարատև ազդեցություն:

Ենթակայանը զբաղեցնում է 3 հեկտար ցանկապատված տարածքը, որն ունի հետևյալ չափերի տարբեր շինություններ (երկարություն x լայնություն x բարձրություն).

- հսկման և բաշխման շենք (այդ թվում գրասենյակներ և մարտկոցի սենյակ)՝ 43.1x13մ;
- 10կՎ ֆիդերների հաղորդաձողային հատվածներ համապատասխան պահուստային շենքով՝ 25.1x6.5մ և 19.4x6.5մ և
- անցակետ՝ 3.5x6.5մ.

## Ծրագրի աշխատանքների շրջանակը

Ենթակայանի վերակառուցումն ու ընդարձակումը ներառելու է հետևյալը.

- 220կՎ բաց բաշխիչ սարքի (ԲԲՍ) մասնակի փոխարինումը ներառում է բաժանիչներ, պարպիչներ, լարման տրանսֆորմատորներ, հենարանային մեկուսիչ, մետաղյա կառույցներ, մալուխներ և հողանցում
- 110կՎ բաց բաշխիչ սարքի (ԲԲՍ) մասնակի փոխարինումը ներառում է բաժանիչներ, պարպիչներ, լարման տրանսֆորմատորներ, ղեկավարման և պաշտպանիչ սենյակներ, հաղորդաձողային պաշտպանություն, հենարանային մեկուսիչ, մետաղյա կառույցներ, մալուխներ և հողանցում
- 10կՎ ՓԲՍ փոխարինումը ներառում է 10կՎ բջիջներ/արկղեր, մալուխներ և հողանցում
- SCADA համակարգի մոնտաժում
- Հաստատուն և Փոփոխական հոսանքի համակարգի փոխարինում՝ ներառյալ փակ բաշխիչ վահանակներ, լիցքավորիչներ, փոխակերպիչներ և մարտկոցներ
- Ռելեյական պաշտպանության փոխարինում
- Մալուխների նոր խրամուղիների պատրաստում և մալուխների փոխարինում
- 10կՎ ՓԲՍ շենքի վերակառուցում, ղեկավարման և դիսպետչերական շենքերի կառուցում
- Տրանսֆորմատորների հրդեհադիմացկուն արգելապատնեշների կառուցում
- Հիմքերի վերանորոգում/կառուցում
- Պորտալների վերակառուցում
- Հողանցման համակարգի մոնտաժում
- Լուսավորության պաշտպանական համակարգի մոնտաժում
- Յուղի բաքերի և յուղի արտահոսքի հավաքման համակարգի վերականգնում/կառուցում և 30մ<sup>3</sup> յուղի բաքի մոնտաժում
- Ներքին ճանապարհների և քայլուղիների վերականգնում
- Արտաքին պատնեշների վերականգնում և ներկում, ներքին պատնեշների կառուցում, մուտքի դարպասի և հակահրդեհային դարպասների փոխարինում
- Ենթակայանի անձրևաջրերի ջրահեռացման և սանիտարական կոյուղու համակարգի վերականգնում
- Տաքացման, հովացման, օդափոխման համակարգի մոնտաժում
- Հակահրդեհային համակարգի և GPS համակարգի մոնտաժում
- Ջրի նոր խողովակների մոնտաժում, որպեսզի մատակարարի ջուր ենթակայանի տարածքում գոյություն ունեցող բաշխիչ ցանցից և հակահրդեհային ավազանի կառուցում

- Արտաքին լուսավորության փոխարինում
- Տարածքի լանդշաֆտային-կանաչապատման աշխատանքներ

Այս բոլոր աշխատանքները տեղի են ունենալու արդեն գոյություն ունեցող ենթակայանի տարածքում (ինչպես ցույց է տրված պատկեր 1-ում), և ազդեցության գոտին սահմանափակված կլինի գոյություն ունեցող ենթակայանի տարածքով:



**Պատկեր 1: Տեղանքի հատակագիծ**

**• ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի հետևյալ օրենսդրությունը սահմանում է ծրագրի աշխատանքներին վերաբերող իրավական շրջանակը:

*Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994թ.)*

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի նպատակն է ՀՀ այն գլխավոր սկզբունքները, որոնք ուղղված են մթնոլորտային օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ներգործության կանխմանն ու մեղմմանը և հասարակական հարաբերությունների կարգավորումը:

Այս օրենքի համաձայն կապալառուն պետք է քանդման և շինարարական աշխատանքներն, ինչպես նաև թափոնների փոխադրումը ու ժամանակավորման պահեստավորումը կազմակերպի այնպես, որ նվազեցնի փոշու և այլ տեսակի արտանետումները օդ:

*Թափոնների մասին ՀՀ օրենք (2004թ.)*

Օրենքն ապահովում է իրավական և տնտեսական հիմք թափոնների հավաքման, փոխադրման, դրանց ազատման, վերամշակման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդկանց կյանքի ու առողջության վրա բացասական ներգործության կանխման համար: Օրենքը սահմանում է պետական լիազորված մարմինների, ինչպես նաև թափոններ ստեղծող կազմակերպությունների դերերը և պարտականությունները թափոնների կառավարման բնագավառում:

Համաձայն այս օրենքի 12 և 13 հավելվածի՝ վտանգավոր թափոնների արտադրողները պետք է մշակեն և հաստատեն թափոնների անձնագրերը, որը պետք է համաձայնեցվի Շրջակա միջավայրի նախարարության հետ:

Այս օրենքի համաձայն քանդման, շինարարության, ապամոնտաժման և տեղադրման աշխատանքների արդյունքում ստեղծված թափոնները պետք է համապատասխան կերպով վերամշակվեն կամ հեռացվեն դրանց համար նախատեսված վայրերում:

*Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014թ.)*

Օրենքը սահմանում է գործունեության այն տեսակները, որոնք ենթակա են շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության:

Համաձայն այս օրենքի Ձովունի ենթակայանում պլանավորվող աշխատանքները ենթակա չեն շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության:

*Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք (1998թթ.)*

Համաձայն այս օրենքի Ձովունի ենթակայանում պլանավորվող աշխատանքները պահանջում են շինարարական թույլտվության առկայություն:

Հատուկ իրավական ակտերը և վերականգնողական աշխատանքների կարգավորիչ միջոցառումները ենթակայանում հետևյալն են՝

- Տեխնիկական մասնագրեր ,Հոսանքի բաշխման միավորների և ենթակայանի սարքավորմանը վերաբերվող պահանջների համար (Կառավարության որոշում #1033-N, 04.09.2008);
- Տեխնիկական մասնագրեր, Էլեկտրաէներգիայի բաշխման համար (Կառավարության որոշում #961-N, 12.07.2007);
- Տեխնիկական մասնագրեր, Էլեկտրաէներգիայի միավորների սարքավորման ընդհանուր պահանջների համար (Կառավարության որոշում#1943-N, 21.12.2006);
- Շինարարական նորմաներ, Շենքերի և կառույցների հրդեհապաշտպանության համար (HHSN 21-01-2014)

**• ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

Ձովունի ենթակայանի հարևան համայնքները համարվում են ազդեցության ենթակա կողմեր շինարարության և շահագործման փուլերի ընթացքում: ՇՄԿՊ-ը հրապարակվելու է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ ինտերնետային կայքում:

Պլանավորվող աշխատանքների վերաբերյալ կարճ տեղեկատվությունը և հարցերի ու բողոքների համար կապի տվյալները կտեղադրվեն աշխատանքների իրականացման վայրում և/կամ դրա անմիջական մոտակայքում/համայնքում:

Անհամաձայնությունների և բողոքների արդյունավետ և արագ լուծման համար, մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմ և ներկայացվել հանրային խորհրդատվությունների ընթացքում: Այն նաև ներկայացված է Ծրագրի վերաբերյալ տեղեկատվության բրոշյուրմի մեջ: Բողոքների լուծման մեխանիզմի առաջին փուլը ներառում է բողոքների լուծումը համայնքային մակարդակում: Բողոքները հավաքվում/արձանագրվում են տվյալ համայնքում լիազորված անձի կողմից և տրամադրվում/հանձնվում են ԲԷՑ ՓԲԸ-ում՝ բողոքների մասով կորոդինատորին: Բողոք ներկայացնողները կարող են նաև անձամբ մոտենալ ԲԷՑ-ի բողոքների մասով կորոդինատորին: Եթե ԲԷՑ-ը չի կարողանում լուծում տալ խնդրին՝ անմիջապես ձեռնարկված ուղղիչ գործողության միջոցով, ապա կհատկորոշվի երկարաժամկետ ուղղիչ գործողություն: Բողոք ներկայացնողը կտեղեկացվի առաջարկվող ուղղիչ գործողության մասին և կհետևի ուղղիչ գործողությանը 25 օրացուցային օր մինչև բողոքի հաստատումը: Այն պարագայում, եթե ԲԷՑ-ը չկարողանա լուծում տալ որևէ մասնավոր խնդրի՝ հաստատված բողոքների լուծման մեխանիզմի միջոցով կամ եթե չպահանջվի իրականացնել որևէ գործողություն, ապա ընկերությունը կտրամադրի մանրամասն բացատրություն/վավերացում, թե ինչու խնդիրը չի լուծվել: Պատասխանը նույնպես պետք է պարունակի բացատրություն, թե ինչպե՞ս անձը/կազմակերպությունը, որը բարձրացրել է բողոքը կարող է շարունակել բողոքի լուծման գործընթացը, այն դեպքում, եթե արդյունքը բավարարող չէ: Ցանկացած ժամանակ, բողոք ներկայացնողները կարող են փնտրել խնդրի լուծման այլ օրինական եղանակներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Հետևաբար, եթե բողոքների լուծման մեխանիզմը ձախողվում է, ապա բողոք ներկայացնողը կարող է հայց ներկայացնել դատարան:

Անհամաձայնությունների և բողոքների արդյունավետ և արագ լուծման համար, մշակվել է Բողոքների լուծման մեխանիզմ և ներկայացվել հանրային խորհրդատվությունների ընթացքում: Այն նաև ներկայացված է Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական բրոշյուրում: Բողոքների լուծման մեխանիզմը բաղկացած է երեք փուլից: Առաջին փուլում փորձ է արվում լուծել բողոքները համայնքի մակարդակում: Բողոքները հավաքագրվում/արձանագրվում են տվյալ համայնքում լիազորված անձի կողմից և տրամադրվում/հանձնվում են ԲԷՑ ՓԲԸ-ում Բողոքների մասով կորոդինատորին: Բողոք ներկայացնողները կարող են նաև անձամբ մոտենալ ԲԷՑ-ի բողոքների մասով կորոդինատորին: Բողոքի պատասխանը տրամադրվում է առավելագույնը 15 օրվա ընթացքում: Եթե բողոքը շարունակվում է կամ բողոքը չի լուծվում, ապա վերջինս քննարկվում է Բողոքների լուծման հանձնաժողովում, որտեղ ներգրավված են մարզի և/կամ համայնքի ներկայացուցիչները և ՀԿ-երը : Եթե

բողոքների լուծման մեխանիզմի երկրորդ փուլի ընթացքում լուծում չի տրվում հարցին, ապա բողոք ներկայացնողը կարող է դիմել դատարան:

• **ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԵՂՄՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

ՇՄԿՊ-ը ծածկում է բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ ծրագրի իրականացման հետևանքով, և ապահովում է մեղմման միջոցներ, որոնք ծածկում են ենթակայաններում սարքավարումների բարելավման և նոր սարքավորումների տեղադրման արդյունքում առաջացող ազդեցությունները, այդպիսով աշխատողների առողջությանն ու անվտանգությունը, հողային աշխատանքները և կոշտ ու վտանգավոր թափոնների կառավարումը: Շրջակա միջավայրի կառավարման պլանը, որն ընդգրկում է կառավարման ու մոնիտորինգի ծրագրերն ըստ ծրագրի իրականացման փուլերի և աշխատանքների, ներկայացված է Հավելված 1-ում:

Թափոնների կառավարումը բնապահպանական ազդեցությունների մեղմման ծրագրի համար մշակված պլանի ամենաբարդ խնդիրն է: Շինարարության փուլում նախատեսվող թափոնների գլխավոր տեսակներն են՝ (1) անվտանգ քանդման հետևանքով առաջացած բեկորները, այլ տեսակի անվտանգ շինարարական թափոնը, փորման աշխատանքների արդյունքում նյութերի ավելցուկը, հնացած սարքավորումները, և (2) վտանգավոր՝ կապարի մարտկոցները, տրանսֆորմատորների օգտագործված յուղերը, սնդիկային լյումինեսցենտ լամպի օգտագործումը, օգտագործված դողերը, ֆիլտրերը և շինարարական տեխնիկայի ու մեքենաների յուղերը:

Անվտանգ թափոնները՝ քանդման հետևանքով առաջացած բեկորները, այլ տեսակի շինարարական թափոնները, ինչպես նաև ասբեստի թափոնները կհեռացվեն Երևան քաղաքում հատկացված աղբավայրեր: Փորման աշխատանքների արդյունքում նյութերի ավելցուկը, կհեռացվեն պաշտոնապես հատկացված վայրեր: Շինարարության կապալառուն թափոնների հեռացման թույլտվությունը պետք է ստանա Երևանի քաղաքապետարանից մինչև դրանց հեռացումը:

Հնացած սարքավորումները կպահվեն Ջովունի ենթակայանի տարածքում մինչև դրանց վաճառքը կամ հնարավոր կրկնակի օգտագործումը ԲԷՑ-ի կողմից: Ենթակայանի 220կՎ բաշխիչ վահանակի առանձին բացօդյա տարածքը կօգտագործվի որպես շահագործումից հանված սարքավորումների պահեստ:

Շինարարական տեխնիկայի և մեքենաների սպասարկումը կատարվելու է մասնագիտացված սպասարկման կենտրոններում, որոնք կարողանում են վարվել օգտագործված դողերի, ֆիլտրերի ու յուղերի հետ:

Ջովունի ենթակայանում տրանսֆորմատորային յուղերը գնահատվել են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության, Թափոնների ուսումնասիրման կենտրոն ՊՈԱԿ կողմից 2010թ.՝ օգտագործելով DEXSIL L2000 DX վերլուծողսարքը: Համաձայն գնահատման արդյունքների՝ Ջովունի ենթակայանում տրանսֆորմատորային յուղերը



չեն պարունակում պոլիքլորացված բիֆենիլներ: Քանի որ ներկայումս չկա վերամշակման լիցենզավորված տեղական կայան, օգտագործված յուղերը փոխադրվելու են այդ ենթակայանի համապատասխան պահուստային տարածք մինչև լիցենզավորված կապալառուի կողմից վերամշակումը:

Քանի որ արգելված է օգտագործված կապարի մարտկոցները աղբավայր նետելը, ապամոնտաժվելուց հետո մարտկոցները պետք է տեղափոխվեն և վերացվեն լիցենզավորված dcdrc չկապալառուի կողմից: Վտանգավոր թափոնների տեղափոխման, պահպանման, վերամշակման, չեզոքացման և հեռացման ուղղությամբ մասնագիտացված լիցենզավորված կազմակերպությունների ցանկը հրապարակված է ՀՀ բնապահպանության նախարարության կայքում՝ <http://www.mnp.am/am/pages/182>: Կապարային մարտկոցները գործարկելիս անձնակազմի կողմից կօգտագործվեն պատշաճ անձնական պաշտպանության միջոցներ:

Քանի որ սնդիկային լյումինեսցենտ լամպի թափումը հողափոս անհնար է, և քանի դեռ ներկայումս երկրում չկա վերամշակման/չեզոքացման լիցենզավորված տեղական կայան, լամպերը պետք է առանց կոտրելու պահուստավորվեն Ջովունի ենթակայանում, մինչև որ ստեղծվի նման տեսակի կայան:

Քանի որ օգտագործած սնդիկային լամպերի հեռացումը աղբավայր հնարավոր չէ և այն, որ այս պահին չկա վերամշակման/չեզոքացման լիցենզավորված տեղական կայան, լամպերը պետք է պահվեն անվնաս Ջովունի ենթակայանում՝ մինչև կստեղծվի այդ տիպի կայան:

Փոխարինված գեներացնող անջատիչները պետք է լինեն ժամանակակից SF6 տիպի անջատիչներ: SF6 գազի քանակը շատ փոքր է և հնարավոր արտահոսքը վերահսկվում է ավտոմատ կերպով: Այսպիսով, ցանկացած SF6-ի շրջակա միջավայր բաց թողնելու ռիսկը նվազագույն է:

ՇՄԿՊ-ն կապ է սահմանում սույն հաշվետվությունում նշված կառավարման ու մեղմման միջոցների և ծրագրի շինարարության ու շահագործման փուլերի ընթացքում միջոցների ճիշտ իրականացման ու կառավարման միջև: Այն տալիս է մանրամասն տվյալներ այդ ազդեցությունների մեղմման միջոցների ու պարտականությունների, մեղմման ծախսերի և մեղմման միջոցների իրականացման ու արդյունավետության մոնիտորինգի ու վերահսկողության վերաբերյալ:

• **ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԱՆ ՄԽԵՄԱՆՆԵՐԸ**

ԲԷՑ-ը պատասխանատու է ՇՄԿՊ իրականացման համար: ԲԷՑ-ը պաշտոնապես կհաստատի այս փաստաթուղթը և կկառավարի բոլոր ասպեկտները՝ կապված ՇՄԿՊ-ի իրականացման հետ: Շրջակա միջավայրի կառավարման պլանի աղյուսակը՝ քաղված այս ՇՄԿՊ-ից, ներառվելու է մրցութային փաթեթում և կազմելու է աշխատանքների կատարման պայմանագրերի մասը, որպեսզի կապալառուն տեղյակ լինի կիրառվելիք մեղմման միջոցների մասին, կարողանա ճիշտ գնահատել դրանց գծով ծախսը ու ներառել նախահաշվում և պահպանի ՇՄԿՊ-ով նախատեսված պարտավորությունները, ինչպես պայմանագրի ցանկացած այլ պայման: ԲԷՑ-ը պետք է ստուգի մեղմացնող միջոցառումները և, այս փաստաթղթով սահմանված լավ գործելակերպը, օգտագործելով իր ներքին կարողությունները, ինչպես նաև վարձու որակավորված շրջակա միջավայրի և/կամ սոցիալական հարցերով խորհրդատուներին, և թերությունների հայտնաբերման դեպքում պետք է տեղեկացնի կապալառուներին/շահառուներին չլուծված խնդիրների մասին ինչպես նաև պահանջի ուղղիչ գործողություններ: Եթե անհամապատասխանությունը պահպանվում է, և խստորեն խախտվում են ՇՄԿՊ-ի պահանջները, ԲԷՑ-ը պետք է կիրառի տուգանքներ, որոնք սահմանված խախտումների համար՝ ըստ պայմանագրի պայմանների:

**ԲԷՑ-ի և Կապալառուների պարտականությունները**

ԲԷՑ-ը պետք է ստանա Շինարարական թույլտվություն նախագծված աշխատանքների համար: ԲԷՑ-ը նաև պետք է մշակի և հաստատի թափոնների անձնագրերը, որը պետք համաձայնեցվի Շրջակա միջավայրի նախարարության հետ բոլոր տեսակի վտանգավոր թափոնների համար:

Նախագծման և շինարարության կապալառուները պետք է ունենան արտոնագրեր շինարարական գործողությունների իրականացման և նախագծման փաստաթղթերի մշակման համար: Շինարարության կապալառուն պետք է ունենա հատուկ նշանակված անձնակազմ, որը պատասխանատու կլինի ՇՄԿՊ-ի իրականացման համար շինարարության փուլերի ընթացքում: Համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ պարտադիր է բոլոր կապալառուների և շահառուների համար:

Աշխատանքի առողջության և անվտանգության (ԱԱԱ) ցանկացած միջադեպ, որը կարող է տեղի ունենալ ծրագրի վայրում, պետք է անհապաղ զեկուցվի Համաշխարհային բանկին՝ առանց հետաձգելու այն, մինչև կկայանա առաջընթացի հերթական զեկույցը: Այս նպատակով, ԲԷՑ ՓԲԸ-ն պետք է ներառի պահանջ՝անհապաղ հաշվետվություն ներկայացնելու ԱԱԱ դեպքերի մասին՝ աշխատանքների հետ կապված կապալառուների և աշխատանքային վերահսկողության խորհրդատուների հետ կնքված պայմանագրերում: Երբ ԱԱԱ-ի դեպքի մասին ծանուցումը հասնի ԲԷՑ ՓԲԸ-ին, այն պետք է անհապաղ հաղորդվի Համաշխարհային բանկին՝ ներառելով հաշվետվության պահի դրությամբ հայտնի մանրամասները:

### **ԲԿԾ իրականացման մոնիտորինգը**

ԲԷՑ-ը ընդհանուր պատասխանատվություն է կրում ՇՄԿՊ իրականացման և աշխատանքների բնապահպանական մոնիտորինգի կազմակերպման համար: Աշխատանքների բնապահպանական մոնիտորինգը պետք է կատարվի սույն հաշվետվությունում ներկայացված Բնապահպանական կառավարման պլանին համապատասխան, և մոնիտորինգի արդյունքները պետք է արձանագրվեն բնապահպանական վերահսկողության ամսական հաշվետվություններում: ԲԷՑ-ը նաև պարտավոր է կանոնավոր կերպով տալ բացատրական հաշվետվություններ մոնիտորինգի արդյունքների մասին: Այս հաշվետվությունները պետք է ամփոփեն աշխատանքի արդյունքները, վերլուծեն առաջացած ընդհանուր խնդիրները, բացատրեն ուղղիչ գործողությունների բնույթը՝ այդ խնդիրների լուծման համար, ինչպես նաև գնահատեն ուղղիչ գործողությունների կարգավիճակը՝ ձեռնարկված միջոցառումները կապված նախորդ հաշվետվության ժամանակահատվածում առաջացած խնդիրների լուծման հետ:

ԲԷՑ-ը պետք է ներկայացնի շրջակա միջավայրի և սոցիալական համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ հաշվետվություններ, մինչ ծրագրի իրականացման աջակցության առաքելությունները, որոնք ձեռնարկվելու են Համաշխարհային Բանկի կողմից: Անվտանգության ապահովման վերլուծական տեղեկությունը նույնպես պետք է հանդիսանա ԷՄՇՕԼՖկիսամյակային առաջընթացի հաշվետվությունների մասը: Հաշվետվությունները պետք է համալրված լինեն թվագրված ֆոտո փաստաթղթով: Տեղանքի մոնիթորինգի ստուգաթերթերը և բացատրական հաշվետվությունները պետք է պահվեն էլեկտրոնային և/կամ պատճենված ձևաչափով ԲԷՑ-ում՝ համակարգային ձևով, և պետք է հասանելի լինեն ՀԲ-ին ըստ պահանջի: Հերթական առաջընթացի մասին

հաշվետվությունները պետք է ներառեն տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած ցանկացած ԱԱԱ-ի դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև իրականացվող հետագա գործողությունների հետ միասին: Եթե միջադեպեր չեն գրանցվել, առաջընթացի յուրաքանչյուր հաշվետվություն պետք է դա նշի:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1: Շրջակա միջավայրի կառավարման պլան  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոց	Մեղման հայտանիշ	Մեղման արժեք	Մեղման արժեքի ա-նա-տո-ւ
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>					
<ul style="list-style-type: none"> <li>Աշխատանքի անվտանգություն</li> </ul>	<p>Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում վերամբարձ կռունկի/էքսկավատորի/բոխլոզերի շահագործման ընթացքում</p>	<ul style="list-style-type: none"> <li>Շինարարության աշխատողներին ապահովում համազգեստով ԱՊՊ-ով</li> <li>կռունկի/էքսկավատորի/բոխլոզերի շահագործման ընթացքում տեղական կանոնակարգերի խիստ պահպանում</li> <li>աշխատանքների իրականացում էլեկտրիկների հսկողության տակ, լարման տակ գտնվող ՕԳ-ին մոտենալիս</li> <li>Վերամբարձ կռունկների մոնտաժում և</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Չնման ընթացքում աշխատողները կրում էին հատուկ համազգեստներ և համապատասխան պաշտպանիչ հանդերձանք</li> <li>Չնման ընթացքում մարքավորումները շահագործմանն օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել</li> <li>Մեքենաները ղեկավարվում են միայն հատուկ վերապատրաստված անձնակազմի կողմից, ովքեր ունեն մեքենա</li> </ul>	<p>Ոչմիկոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն</p>	<p>Շինարարության կապալառու</p>

		<p>ամրապնդում կայուն դիրքում, որպեսզի կանխել սեփական քաշի կամ շարժիչի աշխատանքի պատճառով դրանց վայր ընկնելը կամ ինքնաբուխ տեղաշարժվելը</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մեքենաների շահագործման հնարավորության ստուգում, դրանց ցանկապատման առկայությունը, և հողանցման աշխատանքների համար մեքենայացված կառավարման անվտանգության սարքավորումների ստուգում</li> <li>• Հրահանգներ հատկացնել մեքենաներ սպասարկող աշխատողներին՝ բաղկացած հետևյալով՝ <b>ա)</b> մեքենայի վերահսկման հրահանգ և խնամքով շահագործումը աշխատավայրում;</li> <li><b>բ)</b> տեխնիկական պահանջների անվտանգություն;</li> <li><b>գ)</b> ազդանշանային համակարգերի ուղեցույց; <b>դ)</b> մեքենաների արագությունը և բարձելության առավելագույն</li> </ul>	<p>ղեկավարելու համապատասխան արտոնագիր</p>		
--	--	---	---	--	--

		<p>չափը; <b>ե)</b>  միջոցառումներ,  որոնք պետք է  իրականացվեն  աշխատողների  կողմից՝  մեքենաների հետ  կապված  պատահարի կամ  անսարքության  դեպքում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համապատասխան  մեքենաների  շահագործման  անվտանգության  կանոնների խիստ  պահպանում;</li> <li>• Միայն հատուկ  վերապատրաստվա  ծ անձանց  հատկացնել  մեքենաներ  կառավարելու  արտոնագրեր  իրավասությունը,  որպեսզի  կառավարեն  մեքենաները</li> <li>• Վերամբարձ  կռունկների և  բուլդոզերների  շահագործման  համար հետևյալ  հիմնական  պահանջների  խիստ  պահպանում՝ <b>ա)</b>  մեքենայի բոլոր  պտտվող մասերը՝  ատամնավոր  անիվները,  շղթայավոր և  ժամանակավոր  փոխանցման  տուփերը,  օդամղիչները,  թափանիվները և  այլն պետք է</li> </ul>		
--	--	---	--	--

		<p>ծածկված լինեն կադապարներով: Մեխանիզմների շահագործումը առանց կադապարների արգելվում է; <b>բ)</b> ուսումնասիրում, կարգավորում, հեղյուսների ձգում, յուղում և պրոֆիլակտիկական աշխատանքները սարքավորման աշխատանքի ժամանակ արգելվում է; և <b>գ)</b> Այն տարածքում, որտեղ այդ մեքենաները աշխատում են, այլ գործունեության իրականացումը նմարդկանց ներկայությունը արգելվում է: Եթե հողի շահագործման ժամանակ հայտնաբերվեն մեծ քարեր, կոճղեր կամ այլ առարկաներ, մեքենայի աշխատանքը պետք է դադարեցվի, և առարկաները, որոնք կարող են վթարի պատճառ հանդիսանալ, պետք է հեռացվեն:</p>		
	<p>Ձողման աշխատանքների ընթացքում վնասվածքներ և դժբախտ պատահարներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ձողման աշխատանքների համար տեղական կանոնակարգերի խիստ պահպանում</li> <li>• Ձողման աշխատանքներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ձնման ընթացքում մզոդում իրականացնող աշխատողները կրում են հատուկ համազգեստներ և համապատասխան</li> </ul>	<p>Շինարարության կա</p>

	<p>աշխատանքի վայրում</p>	<p>կատարող աշխատողներին ապահովել պաշտպանիչ սարքավորումներով, ռետինե ձեռնոցներով, հատուկ կոշիկներով և սաղավարտներով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մինչ գոդման աշխատանքների սկսելը բոլոր աշխատողներին ապահովել աշխատանքային անվտանգության վերապատրաստման դասընթացներով</li> <li>• Պաշտպանիչ հանդերձանքի օգտագործման խիստ պահպանում, որը ներառում է առնվազն՝ <b>ա)</b> ռեսպիրատոր/գոդման համար պաշտպանիչ դիմակ; <b>բ)</b> պաշտպանիչ հանդերձանք. Մաշկի բոլոր հատվածները պետք է պաշտպանված լինեն, որպեսզի պաշտպանեն հալած մետաղից և կայծերից: Դաներառում է՝ երկարաթև վերնաշապիկ, տաբատ, որը պետք է ծածկի կոշիկների վերին հատվածը, ձեռնոցներ, կոշիկներ կամ</li> </ul>	<p>պաշտպանիչ հանդերձանք</p> <ul style="list-style-type: none"> <li>• Զննմանընթացում մոդման աշխատանքների րահանգներիխսխտումներչենարձանագրվել</li> <li>• Աշխատանքի անվտանգության վերապատրաստման գրառումները հասանելի են տեղանքում;</li> <li>• Հիմնական հակահրդեհային միջոցների առկայությունը տեղանքում</li> </ul>		<p>պալատում</p>
--	--------------------------	---	--	--	-----------------



	<p>Էլեկտրական սարքավորումների ապամոնտաժման/մոնտաժման ժամանակ վնասվածքներ և դժբախտ պատահարներ աշխատանքի վայրում</p>	<p>երկարաճիտ կոշիկներ; <b>զ)</b> Ուլտրամանուշակագույն լույսի ազդեցությունից և բեկորների վնասվածքներից աչքերի պաշտպանիչ սարքեր; <b>դ)</b> Մաղավարտներ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հակահրդեհային պաշտպանության պահանջների խիստ պահպանում՝ կրակմարիչների պատրաստում և օգտագործում, ինչպիսիք են ավազը և ջուրը:</li> <li>• Էլեկտրական սարքավորումների ապամոնտաժման/մոնտաժման աշխատանքներում ընդգրկված աշխատողներին ապահովել հատուկ համազգեստով և ԱՊՊ-ով;</li> <li>• Էլեկտրական սարքավորումների ապամոնտաժման/մոնտաժման աշխատանքներ անցկացնելիս տեղական կանոնակարգերի խիստ պահպանում:</li> <li>• Աշխատանքի համար մեքենաների, գործիքների և սարքավորումների անվտանգ շահագործման մեթոդների համար՝</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Չնմանընթացքում աշխատողները կրում են հատուկ համազգեստներ և համապատասխան պաշտպանիչ հանդերձանք;</li> <li>• Չնմանընթացքում էլեկտրական սարքավորումների ապամոնտաժման/մոնտաժման աշխատանքների հրահանգների խիստ մենթր չենարձանագրվել</li> <li>• Աշխատանքի անվտանգության վերապատրաստման և հրահանգների գրառումները աշխատողների համար, ովքեր ներգրավված են էլեկտրական սարքավորումների ապամոնտաժման/մոնտաժման գործում, հասանելի են տեղանքում;</li> <li>- Չնմանընթացքում սարքավորումների և գործիքների շահագործման և հրահանգների օգտագործման մեջ</li> </ul>	
--	--	--	---	--

		<p>ներգրավված աշխատողների վերապատրաստման և հրանգավորման կազմակերպում;</p> <ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքի իրականացման համար անսարք կամ չստուգված գործիքների տրամադրման արգելում, ինչպես նաև անուշադրության մատնված մեխանիկական գործիքները, որոնք կապված են էլեկտրամատակարարման ցանցի կամ խտացված օդի խողովակաշարերի հետ; արգելում մալուխների և օդի ճկուն խողովակների ձգում և ծռում; արգելում մալուխների և ճկուն խողովակների հատումը մալուխների, էլեկտրական ճոպանների հետ, տրամադրում շարժաբեռների ձեռքով գործարկման պտտման գործիքներ</li> </ul>	խախտումներ չեն արձանագրվել		
<ul style="list-style-type: none"> <li>• Քանդումն շինարարության</li> </ul>	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> <li>• Քանդումից առաջ անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները՝  <ul style="list-style-type: none"> <li>• Գնահատել աշխատանքի ընթացքում առաջացվող աղտոտումները և արգելումները:</li> <li>• Գնահատել աշխատանքի ընթացքում առաջացվող աղտոտումները և արգելումները:</li> <li>• Գնահատել աշխատանքի ընթացքում առաջացվող աղտոտումները և արգելումները:</li> </ul> </li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Չհսկվող տարածքում քանդման շրջանում առաջացված աղտոտումները և արգելումները:</li> <li>• Ոչ մի պնդումներ չեն արձանագրվել:</li> </ul>	Ոչ մի կոնկրետ լրացուցիչ չեն նախատեսվում:	Շինարարության

		<ul style="list-style-type: none"> <li>• Փոշու առաջացման ճնշում պնեմատիկ փոքրումների/պատերի քանդմանը նթացքում 2 արունակական ցողմանն/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման միջոցով</li> <li>• Շրջակա միջավայրը (մայթերը նձանապարհները) պահել մաքուր բեկորներից փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</li> <li>• աշխատանքների կատարման վայրում 2 ինարարական նյութերի/թափոնների բացայրման արգելում</li> <li>• Շինարարական տեխնիկան նմեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները</li> <li>• Շինարարական նեքենաները անգործ չպահել</li> </ul>	<p>/պատերի քանդում առանց 2 արունակական ցողմանն/կամ փոշուց պաշտպանող էկրանի տեղադրման</p> <ul style="list-style-type: none"> <li>• Չնմանը նթացքում 2 շրջակա միջավայրը (մայթերը նձանապարհները) եղել է մաքուր բեկորներից</li> <li>• Չնմանը նթացքում աշխատանքների կատարման վայրում 2 ինարարական նյութերի/թափոնների բացայրում միջոցով արգելվել</li> <li>• Չնմանը նթացքում 2 ինարարական տեխնիկան նմեքենաները 2 ահագործվել են առանց ավելորդ արտանետումների</li> <li>• Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել</li> </ul>	<p>ու-թյուն է</p>	<p>կապալառու</p>
<p>Աղմուկի ստեղծում</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքային ժամերի հարգում</li> <li>• Գեներատորների, օդի կոմպրեսորների նայլուժային մեխանիկական սարքավորումների շարժիչներ իծած կերպի կոմ 2 ահագործմանը նթացքում, նսարքավորումների բնակելի տարածքներից հնարավորին սեռու տեղադրում</li> <li>• Աղմկախլացուցիչներ ի տեղադրում 2 ար</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող չինարարական սարքավորում միջոցով արգելվել</li> <li>• Չնմանը նթացքում 2 ինարարական սարքավորումները եղել են նվազ տեխնիկական վիճակում</li> <li>• Չնմանը նթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել</li> </ul>	<p>Ոչ մի կոնկրետ լրացուցիչ ծախս. կապալառուի հասարակ պատասխանատվություն է</p>	<p>Շինարարության կապալառու</p>	

		<ul style="list-style-type: none"> <li>Ժականկայաններիև սարքավորումների վրա</li> <li>• սարքավորումների կանխարգելիչպահպանությունադմուկ ընվազեցնելունպատակով</li> <li>• Ոչանհրաժեշտնչօգտագործվողսարքավորումներիանջատում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Մոտակայքիբնակիչներիցբողոքներչենեղել</li> </ul>		
<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարականնյութերովպահովում</li> </ul>	Ստանդարտինչհամապատասխանողնյութերիմատակարարում, ինչըկարողեիսկերստեղծելառույցիանվտանգությաննարդկանցառողջությանհամար	Շինարարականնյութերիձեռքբերումգրանցվածմատակարարներից	Ծագմանհավաստագրերունեցողստանդարտորակիշինարարականնյութերիմատակարարում	Զկա	Շինարարությանկապալառում
<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարականնյութերիևփոխարարում</li> </ul> <p>Շինարարականտեխնիկայիտեղաշարժ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Աղտոտումմեքենաներիվատտեխնիկականվիճակիչճանկվածբեռնատարներիտեղաշարժիպատճառով</li> <li>• Աղմուկիևփոշուպատճառովտեղիբնակչությանըպատճառածանհարմարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Մեքենաներիևսարքավորումներիպատշաճտեխնիկականվիճակը</li> <li>• Բեռներիպաստառում</li> <li>• Փոխարարմանհաստատվածժամերիներթուղիներիհարգում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Չնմանանրնթացքումմեքենաներըևտեխնիկանեղելենպատշաճտեխնիկականվիճակում</li> <li>• Չնմանանրնթացքումչճանկվածբեռներչենհայտնաբերվել</li> <li>• աշխատանքայինժամերիցհետոչմիաշխատանքչիրականացվում, որկարողեխանգարելմոտակայքիբնակչությանը</li> <li>• Մոտակայքիբնակիչներիցբողոքներչենեղել</li> </ul>	Ոչմիկոնկրետլրացուցիչճախս. կապալառուի հասարակպատասխանատվություն	Շինարարությանկապալառում
<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարականսարքավորումներիչափագործումը աշխատա</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Շրջակամիջավայրիաղտոտումարտանետումներիևարտահոսքիպատճառով</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Շինարարականսարքավորումներիպատշաճտեխնիկականվիճակը</li> <li>• Ոչմիավելորդարտանետում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Չնմանանրնթացքումմեքենաներըևտեխնիկանեղելենպատշաճտեխնիկականվիճակում</li> <li>• Հաստատվածաշխ</li> </ul>	Ոչմիկոնկրետլրացուցիչճախս. կապալառուի հասարակպատասխանատվ	Շինարարության

<p>նքների կատարման վայրում</p>	<p>վ</p> <ul style="list-style-type: none"> <li>Մոտակայքի բնակչությանը պատճառաձանհարմարություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ոչմիվառելիքի կարտահոսք</li> <li>Աշխատանքային ժամերի պահպանում</li> </ul>	<p>ատանքային ժամերի ցիտոտոչմիշահագործվող ծանր տեխնիկական մեքենաների պահպանումը</p> <ul style="list-style-type: none"> <li>Մոտակայքի բնակիչների ցրտոքները ենեղել</li> </ul>	<p>ու-թյուն</p>	<p>կապալառու</p>
